




Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽՕՐԻՆԱԿԸ* (Լրացում)

Համգամանքների բերմամբ ուշ ծանոթանալով Ա. Բաուվշտարկի՝ սաղմոսների հայերեն բնագրին նվիրված աշխատությանը, հարկ եմ համարում այստեղ համառոտակի ներկայացնել նրա հիմնական դրույթները¹¹⁵։ Աշխատությունը բաժանված է հինգ գլուխների. 1. Սաղմոսների հայերեն բնագրի ընդհանուր բնութագիրը, 2. Հայերեն բնագրի հարաբերությունը ասորական Պեշիտտայի հետ, 3. Վեցիցյան (որոգիյան) բնագրի հետ, 4. Լուկիանյան բնագրի հետ, 5. Սաղմոսների հայերեն բնագրի առանձնահատուկ տեղը Յոթանասանիցի ոչվեցիցյան վկայությունների շրջանակում։

Հայերեն թարգմանության ընդհանուր բնութագիրը հետազոտողին հետաքրքրում է այն առումով, թե ինչ աստիճանի հարազատությամբ է այդ թարգ-

մանության մեջ ներկայացված նրա նախորինակը։ Քննելով միայն առաջին հիսուն սաղմոսները, Բաուվշտարկը հայերեն բնագրում որպես ազատ թարգմանության քննորոշ արտահայտություններ նշում է. հազվադեպ իմաստային այլըմբռնումները, կապերի և շաղկապների բացթողումը կամ հավելումը, դերանունների և Տէր բառի հավելումը, գոյականների թվի փոփոխումը, բայերի թվի, դեմքի և ժամանակի փոփոխումը և, վերջապես, մեմանկությունը, որը լուսաբանված է ընդամենը մի քանի օրինակով։

3—5-րդ գլուխները նվիրված են հայերեն թարգմանության սկզբնագիր հունարեն խմբագրության որոշմանը։ Հայերեն թարգմանությունը համեմատելով որոգիյան, լուկիանյան և հունական մյուս խմբագրությունների հետ, Բաուվշտարկը եզրակացնում է, որ հայերեն բնագիրը, նախապես թարգմանված լինելով ասորերենից, հետագայում արթագրվել է ոչ թե Յոթանասանիցի ծանոթ որևէ խմբագրության, այլ հունարեն միջանկյալ մի բնագրի համեմատ, որն այնուամենայնիվ ամենամոտ հարաբերության մեջ է լուկիանյան խմբագրության հետ։ Հայերեն թարգմանության հունական սկզբնագիրը Բաուվշտարկը տեղադրում է արևելափոքրասիական մշակութային

* Ծարուհանված «Էջմիածին» ամսագրի 1975 թվականի № № Ս, Դ, 2 և Թ-ից։

¹¹⁵ A. Baumstark, Der armenische Psaltertext. Sein Verhältnis zum syrischen der Pešitta und seine Bedeutung für die LXX-Forschung, „Oriens Christianus“, Leipzig, Neue Serie, Bd. 12/14, 1925, S. 180—213; Dritte Serie, Bd. 1, 1927, S. 158—169, 319—333, Bd. 2, 1927, S. 146—159.

սիճավայրում՝ Ստրժիգովսկու բնորոշմամբ՝ «խեթական անկյունում»:

Աշխատության հիմնական խնդիրը սակայն սաղմոսների հայերեն թարգմանության և Պեշիտտայի կապի պարզաբանումն է: Բառմշտարկը թվարկում է բոլոր այն դեպքերը, որտեղ հայերեն թարգմանությունը և Պեշիտտան համընկնելով իրար, հակադրվում են Յոթանասնից բնագրին: Նրա ներկայացրած ցուցակում կան շատ դեպքեր, որոնք չեն նշված իմ աշխատության մեջ, և հակառակը: Բառմշտարկի ցուցակն ընդգրկում է հայ-ասորական 167 համապատասխանություն, իմը՝ 111: Այս զգալի տարբերության պատճառն այն է, որ Բառմշտարկը ամխտիր կերպով հայ-ասորական ընդհանրությունների շարքն է դասել մասնա ալմ ընթերցվածները, որտեղ հայերեն բնագրին և Պեշիտտային միանում են արաբերեն և եթովպերեն թարգմանությունները: Նրա մշած 167 դեպքերից այդպիսին են 84-ը: Ես սրանք, չնչին բացառությամբ, զանց եմ առել, ինչպես նաև ունենալով այն հանգամանքը, որ մեծ դեպքերում հավանական է, որ մենք գործ ունենք պատահական համապատասխանությունների, կամ էլ Յոթանասնից բնագրի կորած ընթերցվածների հետ: Այլապես, դժվար կլինի բացատրել այն դեպքերը, երբ ի հակադրություն բոլոր մյուս բնագրերի, այդ թվում մասնա Պեշիտտայի, իրար համընկնում են միայն հայերեն և արաբերեն թարգմանությունները: Օրինակ, հետևյալ համարներում հայերեն և արաբերեն թարգմանություններն ունեն.

ԼԷ 12. հեռի եղեն իյնեն փխ հեռի եղեն.

ԼԸ 4. և առացի՝ ցուց փխ ցուց.

ՀԷ 33. փութապէս անցին փխ փութապէս.

ՀԷ 42. նեղաց անցա փխ նեղաց.

ՀԷ 59. արհամարհեաց զմոսա փխ արհամարհեաց.

ԶԲ 3. զգլուխ իւրեանց փխ զգլուխ (մի բնագիր՝ զգլուխ իւր).

ՂԱ 8. ալմոցիկ որ գործեն փխ ամենեցուն որ գործեն.

ԺԲ 13. որդոց իւրոց փխ որդոց.

ԺԳ 5. յախտեան փխ յախտեան յախտեմից.

ԺԵ 10. ատելեաց անցա.....թշմամեաց անցա փխ ատելեաց...թշմամեաց:

ԺԶ 9. զօրս փխ ծառայս:

Այսքանով դեռևս չեն սահմանափակվում Բառմշտարկի և իմ ցուցակի տարբերությունները. մյուսնք համընկնում են միայն 29 դեպքերում: Սա հետևյալն է մի քանի պատճառի. առաջին՝ ես հիմնվել եմ Ջոհրապյանի, իսկ Բառմշտարկը՝ Կոստանդնուպոլսի 1895 թ. հրատարակության վրա, թեև էական կետերում մա հաշվի է առել մասնա Ջոհրապյանի բնագիրը: Իմ մշած հայ-ասորական համապատասխանությունները է 1, ԽԷ 8, ԿԶ 2, ԶԴ 9, ԶԶ 4, ԸԼԳ 3, ԸԼԴ 11, ԸԼԵ 21, ԸԼԶ 20 և ԸԾԱ 1 համարներում, արտահայտված չեն կոստանդնուպոլսյան հրատարակության մեջ, իսկ Բառմշտարկի մշած Ը 3, ԿԲ 6, ԸԽԱ 8 և ԸԽԲ 21 համարներում հաշվի չեն առնված Ջոհրապյանի բնագիրը և մյուս ստղատակը: Երկրորդ՝ Բառմշտարկն օգտվել

է սաղմոսների իմ ձեռքը չանցած ասորերեն համեմատական հրատարակությունից¹¹⁶: Սակայն մյուս ցուցակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս հրատարակության բացակայությունը էսպես չի ազդել իմ հայ-ասորական համեմատությունների վրա: Բառմշտարկը մշում է ընթաններ երկու դեպք, երբ հայերեն թարգմանությունը համապատասխանում է ոչ թե Պեշիտտայի բնագրին, այլ մյուս տարբերակների: Երրորդ՝ իմ աշխատության մեջ տարբեր բնագրերի ընդհանրությունները պարզելիս ավելի կարևոր մշանակություն է տրվել ազատ թարգմանության և միանակության գործոնին, այսինքն պատահաբար կամ միևնույն պատճառներով իրար համընկած ընթերցվածների գոյությունը¹¹⁷:

Այնուամենայնիվ իմ ցուցակի վրա ամհրաժեշտ է սովեցանել մասնա Բառմշտարկի կողմից նկատված հայ-ասորական հետևյալ համապատասխանությունները.

Ե 3. աղաչեն փխ աղաչեցից.

Ե 11. ամպարշտութեան փխ ամպարշտութեանց.

ԺԵ 11. երեսաց քոց փխ հանդերձ երեսոք քովք.

ԺԷ 18. հզօր եղեն փխ խիստ եղեն.

ԻԲ. 4. ստուերաց փխ ստուերի.

ԻԳ. 2. ծովու փխ ծովուց.

ԻԴ. 13. ի բարութեան փխ ի բարիս.

ԻԴ. 15. հանէ փխ հանցէ.

ԼԲ 4. պատգամ փխ բան.

ԼԳ. 8. բանակ հրեշտակաց փխ բանակեացի հրեշտակ.

ԼԴ. 18. ի ժողովս բազմաց փխ ի ժողով բազում.

ԼԴ. 19. թշմամիք իմ փխ թշմամանողք իմ ի տապարարտուց.

ԼԺ 5. ի մանրութիւն և ոչ փխ ի մանրութիւն և.

ԽԴ. 4. զսուր փխ զսուր քո.

ԽԸ 10. կեցցես...ոչ տեսցես...տեսցես փխ կեցցես...ոչ տեսցես...տեսցես.

¹¹⁶ The Peshitta Psalter according to the West Syrian text. Edited with an apparatus criticus by W. E. Barnes, Cambridge, 1904. *ՏԿ՝* C. Moss, Catalogue of syriac printed books and related literature in the British Museum, London, 1962, p. 139.

¹¹⁷ Բառմշտարկի մշած հայ-ասորական համապատասխանություններում կան մասնա որոշ անընդունելիություններ: Այսպես, Ռալֆսի սողատակի տվյալներով բացատրվում է հայերեն բնագրի և Պեշիտտայի կապը ԽԺ 16, ԿԴ 9 և ԸԺԷ 24 համարներում, քանի որ մյուսնք ընդհանուր ընթերցվածը հանդիպում է մասնա Յոթանասնիցի այլ խմբագրություններում: Մի քանի դեպքերում սխալ է հասկացվել հայերեն բնագիրը. Ե 8 համարի ի տաճար բառը համարվել է մեղադրական, Թ 8 համարի կաջ և մնաց ավելադրությունը չի գիտակցվել, իսկ ԸԼԶ 9 համարի եհար գլխի կապակցության մեջ գլխի բառը դիտվել է որպես հայցական:

Ծ 14. հոգւով... քո փխ հոգւով.
 Ծ 18. պատարագս փխ պատարագ.
 ԿԳ 6. խորհեցան փխ խօսեցան.
 ՀԳ 12. արարեր փխ արար.
 ՀԷ 49. հրեշտակի չարի փխ հրեշտակաց չարաց.
 ԶԳ 4. սեղան փխ սեղանք.
 ՂԳ 14. մերժէ...անտես առնէ փխ մերժեցէ...
 անտես արասցէ.
 ՂԶ 2. յիրաւունս և յարդարութիւն...աթոռ նորս փխ
 արդարութիւն և իրաւունք... աթոռոյ նորս.
 ԸԱ 17. շինէ փխ շինեցէ.
 ԸԲ 12. այնպէս հետի արար փխ հետի արար.

ԸԲ 22. ընդ ամենայն (տեղիս է) տէրութիւն նո-
 րա փխ ընդ ամենայն տեղիս տէրութեան նորա.
 ԸԳ 80. առաքես... նորոգես փխ առաքես...
 նորոգեսցես.
 ԸԺԸ 8. պահեցի փխ պահեցից.
 ԸԺԸ 61. մեղաց փխ մեղաւորաց.
 ԸԺԸ 136. վտակք ջուրց... լաչաց իմոց փխ զվտակս
 ջուրց... աչք իմ.
 ԸԼԴ 9. զարուեստս իւր փխ զարուեստս.
 ԸԽԸ 6. յաիտեանս յաիտեանից փխ յաիտեանս և
 յաիտեանս յաիտեանից:

